ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մարտ 2023

Բովանդակություն

Բովանդակություն 1

Ֆինանսական դիրք 2

Վարկային պորտֆել և համեմատականներ 3

Տրամադրված վարկերի ծավալը 3

Տրամադրված վարկերի քանակը 3

Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ 5

Վարկերի կառավարում 6

Վերլուծական գործակիցներ 7

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿԱ անդամների համախառն ակտիվները 2023թ.-ի Մարտի 31-ի դրությամբ կազմել են 180.17 մլրդ դրամ՝ 2022թ.-ի Մարտի նկատմամբ աճելով 7.2%-ով, իսկ 2023թ.-ի Փետրվարի նկատմամբ աճելով 1.4%-ով: (Գծ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը 2023թ.-ի Մարտի 31-ի դրությամբ կազմել է 134.41 մլրդ դրամ՝ նախորդ տարվա Մարտի նկատմամբ աճելով 5.4%-ով, իսկ 2023թ. Փետրվարի նկատմամբ նվազել է 0.8% (Գծ.1):
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալը 2023թ.-ի Մարտի վերջի դրությամբ կազմել է 63.59 մլրդ դրամ՝ 2022թ.-ի Մարտի նկատմամբ աճելով 17.2%-ով, իսկ 2023թ.-ի Փետրվարի նկատմամբ՝ 2.4%-ով (Գծ.1):

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿԱ անդամների ֆինանսական դիրքը 2022-2023թթ. Մարտի վերջի դրությամբ



Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2023թ.-ի Մարտ ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 10. 43 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 5.9%-ով, իսկ 2023թ.-ի Փետրվարի նկատմամբ՝ 23.4%-ով (Գծ. 2):

Գծապատկեր 2. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2022 և 2023 թթ.-երի Հունվար-Մարտ ամիսներին տրամադրված վարկերի ծավալը



Տրամադրված վարկերի քանակը

- 2023թ.-ի Մարտ ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 52,699 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 4.5%-ով, իսկ 2022թ.-ի Մարտի նկատմամբ աճել է 84.8%-ով (Գծ. 3):

- 2023թ.-ի Մարտ ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամներն ունեցել են 157,160 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2022թ.-ի Մարտի նկատմամբ աճել է 4.8%-ով, իսկ 2023թ. -ի Փետրվարի նկատմամբ նվազել է 9.8%-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2023թ.-ի Մարտին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 198 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը կազմել է 855 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2022թ.-ի Մարտին կազմել են համապատասխանաբար՝ 346 և 851-հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2022 և 2023 թթ.-երի Հունվար-Մարտ ամիսներին տրամադրված վարկերի քանակը



Գծապատկեր 4. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծություն



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2023թ.-ի Մարտի դրությամբ Ասոցիացիայի անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 158 մասնաճյուղ, որը, համեմատած 2022թ.-ի Մարտի հետ, նվազել է 1-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամները 2023թ.-ի Մարտի դրությամբ ունեցել են 454 վարկային մասնագետ, որը, համեմատած 2022թ.-ի Մարտի հետ, նվազել է 83-ով:
- 2023թ.-ի Մարտին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը կազմել է 22.98 մլն դրամ, նախորդ ամսին՝ 18.56 մլն դրամ, իսկ 2022թ.-ի Մարտին այս ցուցանիշը կազմել է ևս 18.35 մլն դրամ (Գծ. 5):
- 2023թ.-ի Մարտի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 296.06 մլն դրամ, նախորդ ամսվա 297.46 մլն դրամի և 2022թ.-ի Մարտին 237.53 մլն դրամի համեմատ (Գծ. 5):

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿԱ անդամների տրամադրված միջին վարկը և վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով



Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2023թ.-ի Մարտի վերջի դրությամբ կազմել է 1,296 մլն դրամ, նախորդ ամիս՝ 1,621 մլն դրամ և 2022թ.-ի Մարտին՝ 1,542 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 16.0%-ով, իսկ 2023թ.-ի Փետրվարի նկատմամբ՝ 20.1%-ով: 2023թ.-ի Մարտի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 0.96%-ը, 2022թ.-ի Մարտին ևս կազմել է 1.21% (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿԱ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2023թ.-ի Մարտի վերջի դրությամբ կազմել է 3,493 մլն դրամ, նախորդ ամիս՝ 3,706 մլն դրամ և 2022 թ.-ի Մարտին՝ 3,189 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը աճել է 9. 6%-ով, իսկ 2023թ.-ի Փետրվարի նկատմամբ նվազել է 5.7%: 2023թ.-ի Մարտի

վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 2.60%-ը, 2022թ.-ի Մարտին՝ 2.50% (Գծ. 6):

- **Զուտ դուրսգրումներ:** 2023թ.-ի Մարտի վերջի դրությամբ Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 395 մլն դրամ, նախորդ ամիս՝ 401 մլն դրամ և 2022թ.-ի Մարտին՝ 1,143 մլն դրամ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2023թ.-ի Մարտին նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 1.4%-ով, իսկ 2022թ.-ի Մարտի նկատմամբ նվազել է 65.4%-ով: Ասոցիացիայի անդամների սույն թվականի Մարտի զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 0.29%-ը, նախորդ ամսվա 0.30%-ի և 2022թ.-ի Մարտի 0.90%-ի համեմատ (Գծ. 6):

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿԱ անդամների վարկերի ծավալները Մարտի 31-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2023թ.-ի Մարտի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 74.6%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2022թ.-ի Մարտին կազմել է 75.9% (Գծ. 7):

- Սույն թվականի Մարտի դրությամբ Ասոցիացիայի անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 47.3%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ Ասոցիացիայի անդամների վարկավորման ծավալի 47%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2022թ.-ի Մարտին կազմել է 42.5% (Գծ. 7):
- 2023թ.-ի Մարտի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 35.3%, որը վկայում է Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2022թ.-ի Մարտին կազմել է 32.3% (Գծ. 7):
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2023թ.-ի Մարտ ամսվա դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համար այս գործակիցը կազմել է 1.83, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 1.8 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա Մարտի համար կազմել է 2.10:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿԱ անդամների վերլուծական գործակիցներ




Տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն ու քանակությունը
56,000.0
54,000.0
52,000.0
50,000.0
48,000.0
46,000.0
44,000.0
42,000.0
40,000.0
38,000.0
36,000.0
34,000.0
32,000.0
30,000.0
28,000.0
26,000.0
24,000.0
22,000.0
20,000.0
18,000.0
16,000.0
14,000.0
12,000.0
10,000.0
8,000.0
6,000.0
4,000.0
2,000.0
-
28,515
26,805
26,675
28,112
23,917
25,687
25,393
27,323
34,350
37,678
36,523
50,440
52,699
Mar-22
Apr-22
May-22
Jun-22
Jul-22
Aug-22
Sep-22
Oct-22
Nov-22
Dec-22
Jan-23
Feb-23
Mar-23


Ժամկետանց վարկերի դինամիկան 03/2022-03/2023
PAR 1-30 days
PAR more than 30 days
4,000,000
3,000,000
2,000,000
1,000,000
-
Mar-22
Apr-22
May-22
Jun-22
Jul-22
Aug-22
Sep-22
Oct-22
Nov-22
Dec-22
Jan-23
Feb-23
Mar-23